

կը պնդեն, որ Զրադաշտը Քիւրդ էր. ըսել կուզեն Հին-Քիւրդ կամ Մար:

Այիշանը Մոզութեան վրայ խօսելու ատեն այս յիշատակութիւնները կընէ Զրադաշտի մասին:

«Մենք պարսկազեն Մոզութեան ծանօթագոյն հեղինակը յիշենք, որ հասարակօրէն համարուած է Զրադաշտ: Արդ՝ սա ըստ հաւանագոյն հաշույ ծնած է 600 տարի առաջ քան զՔիւրդ-չական թուականն և մեռած յամի 522 յՈւրմիա քաղաքի, այստեղս ի յիշեն՝ մեր պատմիչք միշտ կցեն քաղաք հայոց, որով ազանդապետն այլ կրնայ ըլլալ Հայ. նոյնպէս Պարսիկ, Մար կամ Ասորի: Զրադաշտ կը նշանակէ Ոսկի աստղ: Զրադաշտ 32 տարեկան հասակին կրաւ կըսեն հայրենիքէն և զնաց արեւիք, Պարսից ու Հնդկաց սահմանաց մօտ, ուր տան տարի քարայրի մը մէջ առանձնացաւ, և հոն ազդեցութեամբ Որմըզդի գրեց հին Բազտրիական լեզուաւ իր հոգեկաւսը գիրքը Աւեստա. Պլինիոս մոզը կը յիշէ Զարատ և Ապուկոր ազգաւ Մար:

Տարակոյս չը կայ որ Զրադաշտը հայ կամ ասորի չէր. ուրեմն կը մնայ հաւանականութեան մէջ Պարսիկ կամ Մար: Եւ եթէ հետեւինք Ռուս պատմարան Կրիկովին, հաւանօրէն կրնանք արդարացնել Քիւրդերու կարծիքը, որ իրենց նախնիքը ոչ

---

(Շնորհաւ հեշտութեան աստուած, որ սպանեց Արա-իմաստութիւնը):

Վահագն. Աստուած զօրութեան և ուժի, որդի էր Հայկազունի Տիգրանի: Վահագնի առասպելներն են, թէ պատերազմել է վիշապներու հետ, այսինքն Աթդահակի՝ որ մեր լեզուով կ'անուանի վիշապ, Աթդահակ Մարաց ներկայացուցիչն է: Որ նա գողացել է Ասորեստանցի Բարշամի յարդեր ու տարեր երկինք և թօթափածներէն տրուած է Յարդգոյի հետ անունը:

Վահագն կը նկարուի քաջալանջ հսկայ ծունկի եկած, թիկունքին ձգած առիւծի մարթ, իր ձեռքին լսիտ: Այդպէս է Վահագն համաստեղութեան մէջ որ 64 աստղերէ կը բաղկանայ վիշապին մօտ:

Անահիթ կամ Լուսին. Աստուածուհի կը պաշտուէր ի Հայաստան: